C-Quadrat Ampega Asset Management Armenia

ԵՌԱՄՅԱԿԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2026Ե3

2026 թվականի երրորդ եռամսյակում կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինի (CQFIX) եկամտաբերությունը կազմել է 0.5%, Պահպանողականինը (CQCON)՝ 0.7%, Հավասարակշռվածինը (CQBAL)՝ 1.1%:

2026 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 8.1-8.6% եկամտաբերություն:

Կենսաթոշակային ակտիվների ընդհանուր արժեքը եռամսյակի ավարտին հասել է 805 միլիարդ դրամի, որի շուրջ 30%-ը կազմել է կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

2026 թվականի երրորդ եռամսյակում, աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական անորոշություններով պայմանավորված, պարտքային ֆինանսական շուկաները եռամսյակը հիմնականում ամփոփել են բացասական արդյունքներով, իսկ բաժնային շուկաները՝ չափավոր դրական:

Ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա ամենամեծ դրական ազդեցությունը ունեցել են տեղական պարտատոմսերը, ավանդները և արտասահմանյան բաժնային արժեթղթերը: Միևնույն ժամանակ արտասահմանյան պարտքային արժեթղթերը ունեցել են բացասական ազդեցություն:

Դրամի արժևորումը դոլարի և եվրոյի նկատմամբ 1.4-1.5% բացասական ազդեցություն է ունեցել ֆոնդերի եկամտաբերության վրա:


Համաշխարհային և տեղական շուկաներում վերջին զարգացումներ

2026 թվականի երրորդ եռամսյակում համաշխարհային ֆինանսական շուկաները գործել են աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական անորոշության ու բարձր անկայունության պայմաններում: Մերձավոր Արևելքում շարունակվող ռազմական հակամարտության սրումը և էներգակիրների մատակարարումների խափանումների ռիսկերը կրկին հանգեցրել են նավթի գնի աճի: Ստեղծված գնաճային ճնշումների պայմաններում զարգացած երկրների կենտրոնական բանկերի մեծ մասը բարձրացրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները, ինչի արդյունքում պարտքային շուկաները գրանցել են բացասական արդյունքներ:

Չնայած այս զարգացումներին՝ համաշխարհային բաժնային շուկաները եռամսյակի ընթացքում հիմնականում գրանցել են չափավոր դրական արդյունքներ: Տնտեսական ակտիվության սպասվածից ավելի դրական դինամիկան, ընկերությունների ֆինանսական արդյունքների բարելավումը և տեխնոլոգիական ոլորտում ներդրումների շարունակական աճը նպաստել են բաժնետոմսերի գների բարձրացմանը:

Երրորդ եռամսյակի ընթացքում 2026 թվականի տնտեսական աճի կանխատեսումները զարգացած երկրների համար բարձրացել են՝ հասնելով 1.7%-ի, իսկ զարգացող երկրների համար նվազել են՝ կազմելով 3.7%: Միևնույն ժամանակ, 2026 թվականի գնաճի կանխատեսումները զարգացած երկրների համար պահպանվել են նույն մակարդակում՝ 3.6%, իսկ զարգացող երկրների համար նվազել են՝ հասնելով 3.4%-ի:

12-ամսյա գնաճը 2026թ սեպտեմբերին




ԱՄՆ-ում գնաճը եռամսյակի ընթացքում արագացել է՝ սեպտեմբերին հասնելով 3.7%-ի և շարունակելով մնալ թիրախից բարձր մակարդակում:

Նման պայմաններում ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը 2026 թվականի սեպտեմբերին 25 բազիսային կետով բարձրացրել է քաղաքականության տոկոսադրույքի թիրախային միջակայքը՝ սահմանելով 3.75–4.00%: Սա 2023 թվականից ի վեր առաջին բարձրացումն է: Որոշումն ընդունվել է միաձայն՝ հաշվի առնելով գնաճը թիրախային մակարդակին վերադարձնելու անհրաժեշտությունը, տնտեսական ակտիվության ընդլայնումը, կապիտալ ներդրումների աճը և աշխատաշուկայի կայունությունը: 2026 թվականի համար տոկոսադրույքի կանխատեսումների միջինը (median) բարձրացել է մինչև 4.125%, ինչը ցույց է տալիս, որ ըստ սպասումների՝ մինչև տարեվերջ հնարավոր է տոկոսադրույքի ևս մեկ բարձրացում:

Ընթացիկ եռամսյակում Եվրոգոտում գնաճը արագացել է՝ սեպտեմբերին հասնելով 3.8%-ի, ինչին ի պատասխան Եվրոպական կենտրոնական բանկը (ECB) ևս 2026 թվականի սեպտեմբերին քաղաքականության տոկոսադրույքը բարձրացրել է 25 բազիսային կետով՝ սահմանելով 2.65%:

Պահպանվող գնաճային ճնշումների, մասնավորապես՝ աշխատավարձերի, էներգակիրների և ներմուծման գների աճի պայմաններում Ճապոնիայի կենտրոնական բանկը ևս 25 բազիսային կետով բարձրացրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ հասցնելով 1.25%-ի՝ 1995 թվականից ի վեր ամենաբարձր մակարդակին:

Քաղաքականության տոկոսադրույքը ընթացիկ եռամսյակի ավարտին



Ռուսաստանի կենտրոնական բանկը հուլիսին 25 բազիսային կետով նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ հասցնելով այն 14%-ի: Սակայն գնաճային ճնշումների և գնաճային սպասումների պահպանման պայմաններում սեպտեմբերին տոկոսադրույքը թողել է անփոփոխ: Բանկը նշել է, որ վերջին ամիսներին գնաճային ճնշումներն ուժեղացել են՝ պայմանավորված որոշ ոլորտներում արտադրական կարողությունների ժամանակավոր կրճատմամբ:

Չինաստանում գնաճը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է՝ հասնելով 0.9%-ի: Չինաստանի ժողովրդական բանկը (PBoC) եռամսյակի ընթացքում քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ:

Հայաստանում տնտեսական ակտիվության աճը դանդաղել է. նախորդ տարվա նույն ամիսների համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը հունիսին կազմել է 7.7%, իսկ սեպտեմբերին՝ 5.0%: Տնտեսական աճը շարունակել է հիմնականում պայմանավորված լինել շինարարության և ծառայությունների ոլորտների աճով, համապատասխանաբար՝ 26% և 15%: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ամիսների համեմատ արդյունաբերությունում գրանցվել է 4.5% անկում, առևտրում աճ չի արձանագրվել, իսկ գյուղատնտեսության անկումը շարունակվել է: Արտաքին առևտրում ներմուծման աճը դանդաղել է՝ կազմելով 7.2%, իսկ արտահանումը գրանցել է 19% անկում:

Գնաճը 2026 թվականի սեպտեմբերին դանդաղել է՝ հասնելով 4.3%-ի, սակայն շարունակել է գերազանցել թիրախային մակարդակը: Այս պայմաններում ՀՀ ԿԲ-ն քաղաքականության տոկոսադրույքը սեպտեմբերին բարձրացրել է 25 բազիսային կետով՝ սահմանելով այն 6.75%: Ըստ ՀՀ ԿԲ խորհրդի, առկա անորոշությունների պայմաններում դիտարկվել են ինչպես Ա տիպի սցենարներ՝ կապված ներքին տնտեսությունում ավելի բարձր պահանջարկի

պայմանների առկայության, արտաքին պահանջարկի հետագա ընդլայնման և գնաճային սպասումների ավելացման ռիսկերի հետ, այնպես էլ Բ տիպի սցենարներ՝ կապված համաշխարհային տնտեսության աճի դանդաղման հեռանկարի, դեպի ՌԴ արտահանման սահմանափակումների հետևանքով գնանկումային ռիսկերի ձևավորման և ՀՀ երկրի ռիսկի հավելավճարի հիմնարար նվազման հետ: Արդյունքում՝ կարևորելով Ա տիպի սցենարներից բխող մակրոտնտեսական ազդեցությունների կառավարման անհրաժեշտությունը, որոշվել է բարձրացնել քաղաքականության տոկոսադրույքը[1]:

Երկրորդ եռամսյակի բարձր կատարողականից հետո համաշխարհային բաժնային արժեթղթերի աճը զգալիորեն դանդաղել է, իսկ որոշ շուկաներում արձանագրվել է անկում: Զարգացած շուկաների բաժնետոմսերն աճել են 2.0%-ով՝ հիմնականում տեխնոլոգիական և էներգետիկ ընկերությունների շահույթների աճի շնորհիվ, որը գերակշռել է աշխարհաքաղաքական լարվածության և դրամավարկային քաղաքականության խստացման վերաբերյալ մտահոգություններին: Զարգացող շուկաների բաժնետոմսերը, ընդհակառակը, նվազել են 0.4%-ով: Անկումը հիմնականում պայմանավորված է հուլիսին Հարավային Կորեայում և Թայվանում կիսահաղորդիչներ արտադրող ընկերությունների բաժնետոմսերի կտրուկ անկմամբ՝ ԱՄՆ խոշոր տեխնոլոգիական ընկերությունների կողմից արհեստական բանականության ենթակառուցվածքներում ներդրումների հնարավոր կրճատման վերաբերյալ մտահոգությունների ֆոնին: Բացասաբար են ազդել նաև Մերձավոր Արևելքում հակամարտության սրումն ու նավթի գների աճը:

ԱՄՆ բաժնետոմսերի շուկան երրորդ եռամսյակի ընթացքում գրանցել է 2.3% աճ՝ չնայած պարտատոմսերի եկամտաբերությունների և էներգակիրների գների աճին: Դրական արդյունքին նպաստել են ընկերությունների ֆինանսական բարձր արդյունքները և բարձր տոկոսադրույքների պայմաններում շահութաբերությունը պահպանելու նրանց կարողությունը:

Եվրոպական բաժնետոմսերը եռամսյակն ամփոփել են զրոյին մոտ բացասական արդյունքներով՝ -0.6%:

Եռամսյակի ընթացքում չինական (Հոնկոնգ) բաժնետոմսերն ապահովել են ամենաբարձր եկամտաբերությունը՝ 8.6%, ինչին նպաստել է կապիտալի վերաբաշխումը կիսահաղորդչային ընկերություններից դեպի չինական բաժնետոմսեր: Մինչդեռ ճապոնական բաժնետոմսերն ունեցել են ամենացածր արդյունքը՝ գրանցելով 4.1% անկում՝ պայմանավորված արհեստական բանականության հետ կապված բաժնետոմսերի գների նվազմամբ, էներգակիրների բարձր գներով և պարտատոմսերի եկամտաբերությունների աճով:


Հաշվետու եռամսյակում համաշխարհային պարտատոմսերի շուկան գրանցել է բացասական արդյունքներ՝ պայմանավորված տոկոսադրույքների աճով և պարտատոմսերի գների նվազմամբ: Ե՛վ ԱՄՆ, և՛ եվրոպական պետական պարտատոմսերը եռամսյակն ամփոփել են բացասական եկամտաբերությամբ՝ համապատասխանաբար -3% և -4.4%:

[1] Դրամավարկային քաղաքականության զեկույց (2026թ. 3-րդ եռամսյակ)

Համաշխարհային ներդրումային դասի պարտատոմսերը (investment grade) եռամսյակն ամփոփել են -2.5%, իսկ ոչ ներդրումային դասի պարտատոմսերը (high yield)՝ -2.2% անկմամբ:

Եռամսյակի ընթացքում հումքային ապրանքների գներն աճել են՝ ապահովելով 16.2% եկամտաբերություն, ինչը հիմնականում պայմանավորված է էներգակիրների թանկացմամբ: Մերձավոր Արևելքում հակամարտության սրման հետևանքով Brent տեսակի նավթի գինը հատել է մեկ բարելի դիմաց 100 ԱՄՆ դոլարի սահմանը: Արդյունքում էներգակիրների եկամտաբերությունը կազմել է 34.4%: Թանկարժեք մետաղների գներն աճել են 1.8%-ով, այդ թվում՝ ոսկու գինը՝ 3.1%-ով: Արդյունաբերական մետաղներն ապահովել են 3.4% եկամտաբերություն, իսկ գյուղատնտեսական ապրանքների գներն աճել են 12.6%-ով:

Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական շուկայական ինդեքսների եկամտաբերությունների 2026 թվականի դինամիկան[2]




2 AMGOV_5-10, AMGOV_10-20, AMGOV_20I-ի համար աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ: Մնացած արտասահմանյան ակտիվների աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

2026 թվականի երրորդ եռամսյակի եկամտաբերության մեկնաբանություն


2026 թվականի երրորդ եռամսյակում կենսաթոշակային ֆոնդերի տեղական և արտասահմանյան ներդրումները, բացի արտասահմանյան պարտքային արժեթղթերից, հիմնականում ամփոփել են չափավոր դրական արդյունքներով: Ընթացիկ եռամսյակում ամենաբարձր եկամտաբերությունը գրանցել են ֆոնդերի կորպորատիվ պարտատոմսերը և այլընտրանքային ներդրումները, մինչդեռ արտասահմանյան պարտքային արժեթղթերը ունեցել են բացասական եկամտաբերություն: Դրամի որոշակի արժևորումը դոլարի և եվրոյի նկատմամբ եռամսյակի ընթացքում բացասական ազդեցություն է ունեցել ֆոնդերի եկամտաբերության վրա:

Նման զարգացումներով պայմանավորված՝ 2026 թվականի երրորդ եռամսյակը կենսաթոշակային բոլոր ֆոնդերը ամփոփել են չափավոր դրական արդյունքներով: Ֆոնդերից Կայուն եկամտայինը (CQFIX) ունեցել է 0.5%, Պահպանողականը (CQCON)՝ 0.7%, Հավասարակշռվածը (CQBAL)՝ 1.1% եկամտաբերություն:


CQFIX եռամսյակային եկամտաբերություն



CQCON եռամսյակային եկամտաբերություն




CQBAL եռամսյակային եկամտաբերություն




2026 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ ֆոնդերի ակտիվների 64-84%-ը ներդրված է եղել Հայաստանում, այնպիսի ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են պետական և կորպորատիվ պարտատոմսերը, ավանդները, բաժնային արժեթղթերը և այլընտրանքային ներդրումները: Ակտիվների մնացած 16-36%-ը ներդրված է եղել արտասահմանյան բաժնային և պարտքային արժեթղթերում:


CQFIX ակտիվների կառուցվածքը



CQCON ակտիվների կառուցվածքը




CQBAL ակտիվների կառուցվածքը



- Ավանդներ և դրամական միջոցներ
- ՀՀ պետական պարտատոմսեր
- Տեղական կորպորատիվ պարտատոմսեր
- Արտասահմանյան պարտքային արժեթղթեր
- Արտասահմանյան բաժնային արժեթղթեր
- Տեղական բաժնային արժեթղթեր
- Այլընտրանքային ներդրումներ

Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների գերակշիռ մասը կազմել են ՀՀ պետական պարտատոմսերը և արտասահմանյան բաժնային ներդրումային ֆոնդերը: Իրենց մեծությամբ հաջորդը եղել են բանկային ավանդները, դրամային կորպորատիվ պարտատոմսերն ու արտասահմանյան պարտքային ներդրումային ֆոնդերը: Ներդրումների ավելի փոքր մասն են կազմել տեղական այլընտրանքային ներդրումները և տեղական բաժնետոմսերը:

Բաժնային ակտիվների եկամտաբերությունը ընթացիկ եռամսյակում




[3]2026 թվականի երրորդ եռամսյակում գլոբալ և զարգացած երկրների բաժնետոմսերն ունեցել են համապատասխանաբար 1.7% և 2.0% եկամտաբերություն:

ԱՄՆ բաժնետոմսերը նույն ժամանակահատվածում գրանցել են շուրջ 2.3% եռամսյակային եկամտաբերություն:

Այս եռամսյակում և՛ Պահպանողական, և՛ Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդերի արտասահմանյան բաժնային պորտֆելները, համաշխարհային շուկաներում վերջին զարգացումներով պայմանավորված, գրանցել են 2.2% եկամտաբերություն:

Պարտքային ակտիվների եկամտաբերությունը ընթացիկ եռամսյակում




[4]Գլոբալ ներդրումային դասի պարտատոմսերը երրորդ եռամսյակում գրանցել են 2.5% անկում: Այս միտումն արտացոլվել է նաև կենսաթոշակային ֆոնդերի արտասահմանյան պարտքային պորտֆելների ցուցանիշներում. Կայուն եկամտային ֆոնդի արտասահմանյան պարտքային պորտֆելի եկամտաբերությունը կազմել է -2.4%, իսկ Պահպանողական ֆոնդինը՝ -2.5%: Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդը արտասահմանյան պարտքային պորտֆել չունի:

Եռամսյակի ընթացքում դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի որոշակի արժևորմամբ պայմանավորված ընդհանուր արտարժութային ազդեցությունը ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա եղել է բացասական՝ 1.4-1.5%-ի չափով:

3 Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):
4 Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ:

ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերություն ընթացիկ եռամսյակում



[5]Հայաստանի 5-10 տարի (AMGOV 5-10) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը կազմել է 1.1%, 10-20 տարի (AMGOV 10-20) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 0.4%, իսկ 20 տարուց ավել (AMGOV 20I) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 0.5%:

2026 թվականի երրորդ եռամսյակում ֆոնդերի՝ Հայաստանի պետական պարտատոմսերի պորտֆելները ունեցել են 0.6-0.7% եկամտաբերություն:

Ֆոնդերի ավանդային պորտֆելները ընթացիկ եռամսյակում գրանցել են 2.7% եռամսյակային եկամտաբերություն:

Ֆոնդերի՝ Հայաստանի ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը, ֆոնդից կախված, տատանվել է 2.3-4.1% միջակայքում:


Ֆոնդերի՝ Հայաստանի ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը բոլոր ֆոնդերում կազմել է 2.9%:

Ֆոնդերի տեղական բաժնետոմսերի եռամսյակային եկամտաբերությունը, ֆոնդից կախված, տատանվել է -5.5%-ից 6.2% միջակայքում:

5 Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ:

Ֆոնդերի երկարաժամկետ եկամտաբերությունը


Ֆոնդերի փայի հաշվարկային արժեքը



2026 թվականի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինը ստեղծման պահից ունեցել է 8.1%, Պահպանողականը՝ 8.3%, իսկ Հավասարակշռվածը՝ 8.6% միջին տարեկան եկամտաբերություն:

Վերջին հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը Կայուն եկամտային ֆոնդի համար կազմել է 6.4%, Պահպանողականի համար՝ 7.9%, իսկ Հավասարակշռվածի համար՝ 8.3%:

Ստեղծման պահից եկամտաբերություն




Կենսաթոշակային կուտակումների գնողունակությունը ստեղծման պահից ավելացել է 129-146%-ով՝ ֆոնդերի՝ գնաճից բարձր եկամտաբերության շնորհիվ:[6]

2026 թվականի սեպտեմբերին կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 166-183% եկամտաբերություն: Նույն ժամանակահատվածում կուտակային գնաճը կազմել է շուրջ 38%:

[6] Գնաճով ճշգրտված եկամտաբերությունը հաշվարկվել է որպես կուտակային անվանական եկամտաբերության և կուտակային գնաճի տարբերություն: Որպես գնաճի ցուցանիշ հիմք է ընդունվել Հայաստանի Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված սպառողական գների ինդեքսը:

Կենսաթոշակային ակտիվների մեծությունը




2026 թվականի սեպտեմբերին Ցե-Կվադրատ Ամպեգայի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի ավելի քան 470 հազար մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կազմել է 805 միլիարդ դրամ, որի շուրջ 30%-ը՝ 237 միլիարդ դրամ, կազմել է կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական ակտիվների դասերի[7] եկամտաբերություն

2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026M9
Term deposits AMD 14.4%	Government Bonds 20+ 35.5%	DM Equities 22.7%	Government Bonds 20+ 25.5%	DM Equities 26.9%	DM Equities 27%	DM Equities 12.6%	Term deposits AMD 10%	DM Equities 24.4%	Government Bonds 20+ 19.3%	DM Equities 21.6%	DM Equities 12.1%
Government Bonds 20+ 13.7%	Government Bonds 5-10 32.5%	Government Bonds 5-10 21.7%	Term deposits AMD 12.5%	Government Bonds 20+ 17.4%	Government Bonds 20+ 19.3%	Term deposits AMD 9.9%	Government Bonds 0-5 6.2%	Government Bonds 20+ 23%	DM Equities 19.2%	Government Bonds 20+ 20.3%	CQBAL 7.3%
Term deposits USD 9.8%	Government Bonds 0-5 22.5%	Government Bonds 20+ 20.9%	Government Bonds 5-10 10.3%	Government Bonds 5-10 16.5%	Term deposits USD 14.1%	Government Bonds 0-5 4.4%	Government Bonds 5-10 2.4%	Government Bonds 5-10 17.1%	Government Bonds 5-10 15.2%	Government Bonds 5-10 17.0%	Government Bonds 5-10 7.2%
Government Bonds 0-5 9.1%	CQFIX 15.9%	Government Bonds 0-5 15.2%	CQFIX 8.3%	CQBAL 14.3%	CQBAL 12.7%	Government Bonds 5-10 3.2%	Government Bonds 20+ -4.1%	CQBAL 16.5%	Government Bonds 0-5 12.9%	CQBAL 13.8%	Term deposits AMD 7.0%
CQFIX 7.9%	Term deposits AMD 15.3%	Term deposits AMD 14.6%	Government Bonds 0-5 7.7%	CQCON 13.8%	CQCON 11.8%	CQBAL 3.1%	CQFIX -4.5%	CQCON 16.3%	CQBAL 11.7%	Government Bonds 0-5 13.3%	Government Bonds 0-5 6.6%
Government Bonds 5-10 7.5%	CQCON 12.5%	CQBAL 14.2%	Term deposits USD 5.7%	CQFIX 10.7%	CQFIX 10.6%	CQCON 2.5%	CQCON -8.2%	Government Bonds 0-5 13.9%	CQCON 11.3%	CQCON 12.8%	Government Bonds 20+ 6.1%
CQCON 6.9%	CQBAL 12.2%	CQCON 14%	CQCON 4.9%	Term deposits AMD 10.6%	Term deposits AMD 10.1%	Government Bonds 20+ 0.7%	CQBAL -8.9%	CQFIX 12.6%	Term deposits AMD 9.2%	CQFIX 10.8%	CQCON 5.9%
CQBAL 5.2%	DM Equities 8.4%	CQFIX 11.9%	CQBAL 4.2%	Government Bonds 0-5 9.5%	Global IG Bonds 9.2%	CQFIX 0.4%	Term deposits USD -14.5%	Term deposits AMD 10.7%	CQFIX 9.0%	Term deposits AMD 9.6%	CQFIX 3.7%
DM Equities 1.6%	Term deposits USD 7.5%	Global IG Bonds 7.4%	Global IG Bonds -1.2%	Global IG Bonds 6.8%	Government Bonds 0-5 5%	Term deposits USD -4%	Global IG Bonds -16.2%	Global IG Bonds 5.7%	Term deposits USD 3.7%	Global IG Bonds 8.2%	Term deposits USD 3.1%
Global IG Bonds -3.2%	Global IG Bonds 2.1%	Term deposits USD 6.9%	DM Equities -7.9%	Term deposits USD 4.1%	Government Bonds 5-10 3.8%	Global IG Bonds -4.7%	DM Equities -32.4%	Term deposits USD 5.1%	Global IG Bonds - 1.7%	Term deposits USD 4.0%	Global IG Bonds - 2.7%

[7] Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ և Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination): Աղյուսակում ներկայացված հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը՝ Government Bonds – Պետական պարտատոմսեր, Term deposits – ժամկետային ավանդներ, Global IG Bonds - Գլոբալ պարտատոմսեր, DM Equities - Զարգացած երկրների բաժնետոմսեր:





Արինա Մելիքյան

Ֆինանսական Վերլուծաբան
Ցե-Կվադրատ Ամպեգա

Իգնատ Ֆրանգյան, CFA

Գլխավոր Ներդրումային Տնօրեն
Ցե-Կվադրատ Ամպեգա

Ծանուցում

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ներդրում պարունակում է ռիսկեր, ֆոնդերի եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն կարող կանխորոշել ֆոնդերի հետագա եկամտաբերությունը:

Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշները ներառում են ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը և ենթադրում են բոլոր եկամուտների վերաներդրում:

Այս փաստաթուղթը ծառայում է բացառապես տեղեկատվական նպատակի և չի ներկայացնում որևէ հրապարակային առաջարկ ֆոնդի փայեր գնելու կամ վաճառելու: Սույն փաստաթղթում տեղ գտած տեղեկատվությունը պետք չէ դիտարկել որպես ներդրումային խորհրդատվություն:

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: